



1. Ի՞նչ է կապիկի ծաղիկը:

Կապիկի ծաղիկը վարակիչ հիվանդություն է, որն առաջանում է կապիկի ծաղիկ վիրուսից: Կապիկի ծաղիկ վիրուսը պատկանում է նույն ընտանիքին, ինչին վարիոլան (variola), որն առաջացնում է բնական ծաղիկ: Կապիկի ծաղիկ և բնական ծաղիկ ախտանիշները նման են, բայց կապիկի ծաղիկ ախտանիշներն ավելի թեթև են և հազվադեպ են մահացու: Կապիկի ծաղիկը ջրծաղիկի հետ կապված չէ:

Կապիկի ծաղիկն առաջին անգամ հայտնաբերվել է 1958 թ.-ին կապիկների խմբերում, որոնց պահում էին հետազոտությունների համար: Մարդկանց մոտ կապիկի ծաղիկ առաջին դեպքը գրանցվել է 1970թ.-ին: Նախկինում մարդկանց մոտ կապիկի ծաղիկ դեպքեր գրանցվել են Կենտրոնական և Արևմտյան Աֆրիկայի մի քանի երկրներում: Միացյալ Նահանգներում գրանցված գրեթե բոլոր դեպքերը կապված են եղել ճամփորդությունների հետ այն երկրներ, որտեղ հայտնի է, որ հիվանդությունը պատահում էր, նաև կապված են եղել ներկրված կենդանիների հետ:

Սակայն 2022թ.-ի մայիսից սկսած՝ կապիկի ծաղիկ խոշոր բռնկումներ են եղել բազմաթիվ երկրներում, ներառյալ Միացյալ Նահանգներում: Հիմնական եղանակը, որի միջոցով մարդիկ վարակվում են, ախտանիշներ ունեցող մարդկանց հետ սերտ, մտերմիկ (ինտիմ) շփումն է, հատկապես սեռական հարաբերության ժամանակ: Թեև որոշ մարդիկ կարող են ծանր հիվանդանալ, մարդկանց մեծ մասը հիվանդանոցում բուժվելու կարիք չի ունենում և առողջանում է 2-4 շաբաթում: Կապիկի ծաղիկ բուժման համար հասանելի են պատվաստանյութեր և հակավիրուսային դեղեր:

Հետևյալ հաճախակի տրվող հարցերը Միացյալ Նահանգներում 2022թ.-ի կապիկի ծաղիկ բռնկման մասին են:

2. Որո՞նք են կապիկի ծաղիկ նշաններն ու ախտանիշները:

Կապիկի ծաղիկ ախտանիշները սովորաբար հայտնվում են վարակվելուց հետո 3 շաբաթվա ընթացքում:

Ամենատարածված ախտանիշը ցանն է, որը կարող է՝

- Նման լինել ելուստների, բշտիկների, պզուկների կամ քուսի: Մինչև ապաքինվելը այն անցնում է մի քանի փուլերով: Սովորաբար ցանը սկզբում լինում է կարմիր, հարթ կետերի տեսքով, հետո վերածվում է բշտիկների: Այդ բշտիկները կարող են լցվել հեղուկով, որը դառնում է թարախ: Բշտիկները այնուհետև կոշտանում են՝ վերածվելով կեղևի:
- Լինել սեռական օրգանների (առնանդամ, ամորձիներ, սեռական շուրթեր և հեշտոց) հետանցքի, բերանի մոտ կամ դրանց վրա, ինչպես նաև մարմնի այլ մասերում, օրինակ՝ ձեռքերին, ոտքերին, կրծքին և դեմքին:
- Տարածվել ամբողջ մարմնով կամ լինել միայն մարմնի մեկ հատվածում: Կարող են լինել ընդամենը մի քանի բշտիկներ կամ ելուստներ:
- Լինել ցավոտ կամ քոր գալ: Որոշ մարդիկ ունենում են ուժեղ ցավեր, հատկապես եթե ցանը բերանի կամ հետանցքի մեջ է:





Մարդիկ բացի ցանից կարող են ունենալ նաև հարբուխին բնորոշ ախտանիշներ: Սրանք կարող են հայտնվել ցանի առաջանալուց 1-4 օր առաջ կամ հետո: Սրանք ներառում են ջերմություն/դողը, այտուցված ավշային հանգույցները, հոգևածությունը, մկանային ցավերը և գլխացավը:

Կապիկի ծաղիկով հիվանդ մարդկանց մեծ մասն առողջանում է 2-4 շաբաթում:

Կապիկի ծաղիկի ցաների նկարները տեսնելու համար այցելեք ՀՏՀ-ների էջը

ph.lacounty.gov/monkeypox կայքում:

3. Ինչպե՞ս է տարածվում կապիկի ծաղիկը:

Հիմնական եղանակը, որի միջոցով մարդիկ վարակվում են, ախտանիշներ ունեցող մարդկանց հետ սերտ, մտերմիկ (ինտիմ) շփումն է, հատկապես սեռական հարաբերության ժամանակ:

Կապիկի ծաղիկը կարող է տարածվել հետևյալ միջոցներով.

- Մաշկը մաշկին շփում կապիկի ծաղիկ ունեցող անձի վերքերի և դրանց կեղևի հետ
- Մաշկը մաշկին շփում կապիկի ծաղիկ ունեցող անձի մարմնի հեղուկների և շնչառական արտազատուկների հետ, օրինակ՝ վերքերից դուրս եկող հեղուկ, թուփ, որը բերանում շփվել է բերանի վերքերի հետ:
- Հպում/ծակոց սուր առարկաներով (օրինակ՝ ասեղ), որը դիպել է կապիկի ծաղիկով հիվանդի մարմնի հեղուկներին կամ վերքերին:
- Շփում այն իրերի հետ (օրինակ՝ անկողնային պարագաներ, սրբիչներ, հագուստ), որոնք դիպել են կապիկի ծաղիկով հիվանդի մարմնի հեղուկներին կամ վերքերին և չեն լվացվել: (Նշում CDC-ն հաստատում է, որ այս եղանակով վարակվելու հավանականությունը շատ ցածր է:

Կապիկի ծաղիկով հիվանդը կարող է այն փոխանցել ուրիշներին սկսած այն պահից, երբ ախտանիշները հայտնվում են, մինչև երբ ցանն արդեն ամբողջովին լավացել է և ձևավորվել է մաշկի նոր շերտ: Սա սովորաբար տևում է 2-4 շաբաթ:

Կապիկի ծաղիկով հիվանդ հղի անձը կարող է այն փոխանցել իր պտղին ընկերքի միջոցով: Այս վիրուսը կարող է փոխանցվել նաև ծննդաբերության ընթացքում կամ դրանից հետո երեխայի հետ սերտ շփման միջոցով:

Գիտնականները շարունակում են ավելի ուսումնասիրել, թե ինչպես է տարածվում կապիկի ծաղիկը, ներառյալ՝

- Արդյոք վարակը կարող է տարածվել, եթե վարակվածը չունի [ախտանիշներ](#) (մինչև հիմա չկա որևէ ափացույց, որ սա պատահում է)
- Որքան հաճախ է այն տարածվում շնչառական արտազատուկների միջոցով
- Արդյոք կապիկի ծաղիկը կարող է փոխանցվել սերմնահեղուկի, հեշտոցի հեղուկի, մեզի կամ կղանքի միջոցով:

Հավելյալ տեղեկությունների համար տես CDC-ի [ինչպես է տարածվում կապիկի ծաղիկը](#) կայքէջը:



4. Ովքե՞ր ունեն կապիկի ծաղկով հիվանդանալու հավանականություն:

Այս բռնկման ընթացքում Միացյալ Նահանգներում այն մարդկանց ճնշող մեծամասնությունը, որոնց մոտ ախտորոշվել է կապիկի ծաղիկ, տղամարդիկ են, որոնք հայտնել են այլ տղամարդու հետ սեռական հարաբերություն կամ մտերմիկ (ինտիմ) շփում ունենալու մասին: Սակայն յուրաքանչյուր ոք՝ անկախ սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից/սեռից, գտնվում է կապիկի ծաղկով վարակվելու վտանգի տակ, եթե ունենում է սերտ, մաշկը մաշկին ինտիմ շփում կապիկի ծաղկի ախտահիշներ ունեցող որևէ մեկի հետ:

Քանի որ սա նոր բռնկում է, հանրային առողջապահական կազմակերպությունները և՛ երկրի ներսում, և՛ միջազգային մակարդակում դեռևս պարզում են, թե որոնք են այն իրավիճակներն ու վարքագծերը, որոնք կարող են մարդկանց դնել ավելի մեծ վտանգի տակ: Հավելյալ տեղեկություններ կան CDC-ի հետևյալ կայքում՝ [Գիտական համառոտ տեղեկություններ կապիկի ծաղկի վիրուսի հայտնաբերումն ու փոխանցումը](#):

5. Ինչպե՞ս է բուժվում կապիկի ծաղիկը:

Չկան Սննդի և Դեղորայքի Վարչության (FDA) կողմից հաստատված դեղեր հատուկ կապիկի ծաղիկը բուժելու համար: Սակայն FDA-ի կողմից հաստատված tecovirimat (կամ TPOXX) հակավիրուսային դեղը, որն օգտագործվում է բնական ծաղիկը բուժելու համար, կարող է օգտագործվել կապիկի ծաղիկ ունեցող մարդկանց բուժելու համար: TPOXX-ը կարող է տրվել այն մարդկանց, որոնք ունեն կապիկի ծաղկի ծանր ընթացք, ներառյալ՝ ունեն վերքեր մարմնի զգայուն մասերում կամ ցավ, որը չի թեթևանում ազատ վաճառվող դեղերի միջոցով: Այն կարող է տրվել նաև այն մարդկանց, որոնք ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան (տե՛ս ստորև՝ *Ովքե՞ր կարող են լինել կապիկի ծաղկով ծանր հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ*): Ծանոթացեք ավելիի հետ CDC-ի՝ [Հիվանդների համար կապիկի ծաղկի TPOXX-ով բուժման ուղեցույցում](#):

Եթե Դուք ունեք կապիկի ծաղիկ, Ձեր բժիշկը կարող է նշանակել ոչ կապիկի ծաղկի համար նախատեսված դեղեր, որոնք կարող են թեթևացնել ցավը և ցանի կամ վերքերի առաջացրած գրգռվածությունը: Հավելյալ տեղեկությունների համար, թե ինչպես հաղթահարել Ձեր ախտահիշները, այցելեք CDC-ի [հ՛նչ անել, եթե հիվանդ եք](#) կայքէջ:

6. Ո՞րն է ծանր կապիկի ծաղիկը:

Շատ մարդիկ ունենում են կապիկի ծաղկի թեթև հիվանդություն, բայց որոշ մարդկանց համար կապիկի ծաղիկը կարող է լուրջ լինել: Ծանր կապիկի ծաղիկը կարող է ներառել՝

- Ցան կամ ցավեր աչքերի վրա կամ դրանց մոտ
- Ցան, որը տարածվում է ամբողջ մարմնով, կամ դրա առանձին մասնիկները ձուլվում են իրար հետ:
- Ցավ ուղիղ աղիքում (հետույքում) կամ միզուկում (միզանցքում) որը դժվարացնում է զուգարան գնալը:
- Ցավ բերանում, որը դժվարացնում է ուտելը և խմելը
- Ցան, որն արյունահոսում է կամ ախտահարված տեսք ունի
- Ախտահիշներ, որոնք վատթարանում են կամ ժամանակի ընթացքում չեն բարելավվում:



Անմիջապես դիմեք բուժօգնության, եթե ունեք այս ախտանիշներից որևէ մեկը կամ այլ ախտանիշներ, որոնք մտահոգում են Ձեզ: Եթե ունեք չկառավարվող կամ բարդացած ՄԻԱՎ, անմիջապես դիմեք բժշկի, նույնիսկ եթե թվում է, թե կապիկի ծաղկի Ձեր ախտանիշները թեթև են:

7. Ովքե՞ր են կապիկի ծաղկով ծանր հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ:

Մարդիկ, որոնք ունեն չկառավարվող կամ բարդացած ՄԻԱՎ (HIV), գտնվում են ծանր հիվանդանալու վտանգի տակ, եթե վարակվեն կապիկի ծաղկով: Այլ մարդիկ, որոնք ունեն խիստ թույլացած իմունային համակարգ, նույնպես համարվում են ծանր հիվանդանալու բարձր հավանականություն ունեցող:

Կապիկի ծաղկով հիվանդ մարդիկ, որոնք ունեն վերքեր իրենց աչքերում, բերանում, հետանցքում և/կամ սեռական օրգանների վրա, կարող են ունենալ ուժեղ ցավեր և այտուցվածություն: Այս մասերը կարող են ախտահարվել բակտերիայով: Կա նաև սպի առաջանալու վտանգ:

Բացի այդ, ելևելով այն ամենից, ինչ գիտենք կապիկի ծաղկի նախկին բնկումներից, վարակվելու դեպքում հետևյալ խմբերը կարող են գտնվել կապիկի ծաղկով ծանր հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ: Մենք դեռ չգիտենք, թե ներկա բնկման ընթացքում որն է ծանր հիվանդանալու նրանց վտանգի աստիճանը, եթե վարակվեն:

- Մարդիկ, որոնք ունեն իմունային անբավարարություն (բուժման, հիվանդության կամ վարակի պատճառով ունեն թույլ իմունային համակարգ):
- Մարդիկ, որոնք ունեն հիվանդություն կամ վիճակ, որն ազդում է մաշկի վրա, օրինակ՝ Էկզեմա, ատոպիկ մաշկաբորբ, թեփատու որքին (պսորիազ), շփաբորբ (իմպետիգո) ծայրահեղ պզուկոտում (ակնե), հերպես կամ այրվածքներ
- Երեխաները, հատկապես՝ 8 տարեկանից փոքր
- Հղի կամ կրծքով կերակրող անձինք

Այս բնկման ընթացքում կապիկի ծաղկով վարակված մարդկանց մեծ մասը եղել են չափահաս տղամարդիկ, որոնք հիվանդանոցում բուժման կարիք չեն ունեցել: Սակայն եղել են կապիկի ծաղկի ծանր դեպքեր, ներառյալ մահեր, այն մարդկանց շրջանում, որոնք ունեցել են ծայրահեղ թուլացած իմունային համակարգ: Սա ներառում է չկառավարվող կամ բարդացած ՄԻԱՎ ունեցող մարդկանց:

8. Ի՞նչ պետք է անեմ, եթե կարծում եմ, որ վարակվել եմ կապիկի ծաղկով:

Անմիջապես կապ հաստատեք Ձեր բժշկի հետ, եթե ունեք նոր, անբացատրելի ցան կամ վերքեր Ձեր մարմնի ցանկացած մասում: Սա հատկապես կարևոր է, եթե Դուք շփվել եք որևէ մեկի հետ, որն ունի կամ կասկած կա, որ ունի կապիկի ծաղիկ: Ծածկեք ցաների բոլոր մասերը հագուստով, ձեռնոցներով ու/կամ վիրակապերով և քայլեր ձեռնարկեք՝ պաշտպանելու ուրիշներին: Սա ներառում է խուսափելը ուրիշների հետ մաշկը մաշկին շփումից և մտերմիկ(ինտիմ) շփումից, քանի դեռ բժիշկը չի ասել, որ վարակ չունեք: Անպայման դիմակ կրեք բժշկի մոտ գնալիս:



ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Հաճախակի տրվող հարցեր

Չանգահարեք Հանրային Առողջության Վարչության Չանգերի Կենտրոն 1-833-540-0473 համարով (բաց է ամեն օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը), եթե չունեք բժիշկ կամ բժշկական ապահովագրություն: Եթե ցան ունեք, կարող եք նաև օգտվել Հանրային Առողջության Վարչության Սեռական Առողջության Կլինիկաների ծառայություններից (տե՛ս [ժամանակացույցը այստեղ](#)):

Մինչև կիմանաք, որ կապիկի ծաղիկ չունեք, քայլեր ձեռնարկեք վարակը տարածելու վտանգը նվազեցնելու համար՝ մյուսներից հեռու մնալով: Տե՛ս՝ [Մեկուսացման հրահանգներ կապիկի ծաղկով հիվանդ մարդկանց համար](#):

9. Ինչպե՞ս կապիկի ծաղկի համար թեստավորվել:

Եթե Դուք ունեք ցան, որը հնարավոր է, որ կապիկի ծաղկի պատճառով լինի, Ձեր բժիշկը կգնահատի այն: Ելնելով իրանց եզրակացությունից՝ հնարավոր է, որ նրանք Ձեր ցանից նմուշ վերցնեն հետազոտության համար: Նմուշը ուղարկվում է լաբարատորիա, և թեստի արդյունքը պետք է հասանելի լինի մի քանի օրից: Այս պահին կապիկի ծաղկի համար չկան ինքնուրույն կամ տանը արվող թեստեր:

Մինչև կիմանաք, որ կապիկի ծաղիկ չունեք, կարևոր է, որ հետևեք [կապիկի ծաղկի մեկուսացման հրահանգներին](#):

10. Ի՞նչ պետք է անեմ, եթե ինձ մոտ ախտորոշվել է կապիկի ծաղիկ:

Եթե Ձեզ մոտ ախտորոշվել է կապիկի ծաղիկ, Դուք պետք է մեկուսանաք՝ պաշտպանելու մյուսներին: Հետևեք [Կապիկի ծաղկով հիվանդ մարդկանց համար մեկուսացման հրահանգներին](#), որոնք հասանելի են մի քանի լեզուներով ph.lacounty.gov/monkeypox կայքում:

Կապ հաստատեք Ձեր սեռական զուգընկերների և ցանկացած այլ անձանց հետ, որոնց հետ ունեցել եք սերտ, մտերմիկ և/կամ երկարատև շփում Ձեր ախտանիշների հայտնվելուց հետո: Դա արեք որքան հնարավոր է շուտ, որպեսզի նրանք կարողանան դիտարկել [պատվաստվելը](#) (եթե արդեն չեն վարակվել կապիկի ծաղիկով կամ չեն պատվաստվել կապիկի ծաղկի դեմ): Վարակի հետ շփումից հետո պատվաստվելը կարող է կանխել կապիկի ծաղկով հիվանդանալը կամ հիվանդությունը դարձնել պակաս ծանր: Նրանք կարող են նաև ուշադիր լինել՝ կապիկի ծաղկի ախտանիշները հայտնաբերելու համար:

Խնդրում ենք պատասխանել Հանրային Առողջության գանգերին: Նրանք Ձեզ հետ կապ կհաստատեն՝ հարցնելու Ձեր գործողությունների մասին, որոնք ունեցել եք ախտանիշների հայտնվելուց առաջ և հետո: Սրա նպատակն է պարզել, թե ինչպես եք վարակվել, և հայտնաբերել այլ մարդկանց, որոնք կարող են վարակի հետ շփում ունեցած լինել:

11. Ինչպե՞ս կարող եմ ես ինձ համար նվազեցնել կապիկի ծաղկով վարակվելու վտանգը:

Կապիկի ծաղկի տարածումը կանխելու համար կան մի քանի ձևեր.

- Պատվաստվեք, եթե իրավասու եք (տե՛ս ներքևում)





Հաճախակի տրվող հարցեր

- Խուսափեք ցանկացած անձի հետ, որն ունի կապիկի ծաղկի ախտանիշներ, շատ սերտ մտերմիկ (ինտիմ) շփումներից, հատկապես՝
 - Բերանային, հետանցքային և հեշտոցային սեռական հարաբերությունից և սեռական օրգաններին ու հետանցքին դիպչելուց
 - Գրկախառնվելուց, շոյելուց, մերսելուց և/կամ համբուրվելուց
 - Նրանց մարմնի ցանի հետ մաշկը մաշկին շփումից
 - Համատեղ օգտագործելուց սրբիչներ, հագուստ, անկողնային պարագաներ, ծածկոցներ և այլ իրեր ու նյութեր (օր.՝ ատամի խոզանակ, բաժակներ, սպասք և սեքս-խաղալիքներ), որոնք չեն մաքրվել
 - Երկար ժամանակ (3 ժամ կամ ավել) շատ մոտ հեռավորությունից դեմառդեմ խոսելուց:
- Սեռական հարաբերությունից հետո լվացեք Ձեր ձեռքերը, ֆետիչային իրերը, սեռական խաղալիքները և ցանկացած գործվածք (անկողնային պարագաներ, սրբիչներ, հագուստ):
- Կրեք համապատասխան պաշտպանիչ միջոցներ (դիմակ, ձեռնոց և խալաթ), եթե չեք կարող խուսափել կապիկի ծաղկով հիվանդի հետ սերտ շփումից:
- Խոսեք սեռական զուգընկերների հետ վերջերս ունեցած ցանկացած հիվանդության և նոր ու անբացատրելի վերքերի ու ցանի մասին, ներառյալ դրանց, որոնք սեռական օրգանների և հետանցքի վրա են:
- Օգտագործեք պահպանակ: Հավանաբար, միայն պահպանակները բավարար չեն կապիկի ծաղկի կանխարգելման համար: Սակայն դրանք կարող են նվազեցնել վարակվելու վտանգը և կարող են օգնել կանխել ցանի առաջացումը զգայուն հատվածներում, ինչպիսիք են՝ հետանցքը, բերանը կամ սեռական օրգանները:
- Նվազեցրեք սեռական զուգընկերների թիվը:
- Խուսափեք ավելի վտանգավոր գործողություններից, ինչպիսիք են անծանոթների հետ սեռական հարաբերությունները և սեռական նպատակներով խնջույքները:՝

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի կայքէջը՝ [Ավելի ապահով սեքսը. հասարակական հավաքույթներն ու կապիկի ծաղիկը:](#)

12. Կա՞ն կապիկի ծաղիկի դեմ պատվաստանյութ:

Այո: JYNNEOS կոչվող պատվաստանյութը հաստատված է Սննդի և Դեղորայքի Վարչության (FDA) կողմից որպես կապիկի ծաղիկը կանխարգելող միջոց 18 տարեկան և ավելի բարձր տարիքի մարդկանց համար: Այն նաև հասանելի է 18-ից ցածր տարիքի մարդկանց համար՝ FDA-ի՝ արտակարգ իրավիճակներում օգտագործման թույլտվությամբ: Այն երկու դեղաչափով տրվող պատվաստանյութ է: Պահանջվում է 14 օր JYNNEOS -ի 2-րդ դեղաչափը ստանալուց հետո, որպեսզի առաջանա լավագույն իմունային պատասխան: Սակայն միայն մեկ դեղաչափը նույնպես կարող է ստեղծել որոշակի պաշտպավածություն: Կարևոր է նշել, որ պատվաստանյութի ոչ մեկ, ոչ էլ երկու դեղաչափերը 100%-ով արդյունավետ չեն վարակը կանխելու հարցում: Կարևոր է շարունակել այլ քայլեր ձեռնարկելը, որպեսզի Ձեզ համար նվազեցնեք վտանգը:

Եթե պատվաստանյութը տրվում է նախքան անձը կշփվի կապիկի ծաղկի հետ, դա օգնում է նրան պաշտպանվել կապիկի ծաղիկով վարակվելուց:



ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Հաճախակի տրվող հարցեր

Եթե այն տրվում է շփումից հետո, դա կարող է օգնել կանխել հիվանդանալը կամ այն դարձնել պակաս ծանր: Այն պետք է տրվի վարակի հետ շփումից հետո մինչև 14-րդ օրը (լավագույնս է՝ առաջին 4 օրերի ընթացքում):

Եթե անձն արդեն ունի կապիկի ծաղիկ, պատվաստումը խորհուրդ չի տրվում:

Պատվաստանյութի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [Կապիկի ծաղիկ պատվաստանյութերի ՀՏՀ-ներ:](#)

13. Ո՞վ է իրավասու ստանալ կապիկի ծաղկի դեմ պատվաստանյութ:

Պատվաստանյութը հասանելի է՝

- Ցանկացած տղամարդու կամ տրանսգենդեր մարդու, որը սեռական հարաբերություն է ունենում տղամարդկանց կամ տրանսգենդեր մարդկանց հետ:
- Ցանկացած սեռի/գենդերի և ցանկացած սեռական կողմնորոշման մարդկանց, որոնք սեռական հարաբերություն են ունենում առևտրային կամ գործարքային նպատակներով (օր.՝ սեռական հարաբերություն՝ փողի, կացարանի, սննդի կամ այլ իրերի կամ անհրաժեշտությունների դիմաց) կամ կամ սեռական հարաբերություն են ունենում խոշոր հասարակական միջոցառման ժամանակ:
- Մարդիկ, որոնք ունեն ՄԻԱՎ (HIV), հատկապես այն անձինք, որոնք ունեն չկառավարվող կամ բարդացած ՄԻԱՎ հիվանդություն:
- Մարդիկ, որոնք ունեցել են մաշկը մաշկին կամ մտերմիկ(ինտիմ) հարաբերություն որևէ մեկի հետ, որը հաստատված է կամ կասկած կա, որ ունի կապիկի ծաղիկ, ներառյալ նրանք, որոնք դեռ հաստատում չեն ստացել Հանրային Առողջության Վարչությունից:
- Այն մարդկանց սեռական գուգընկերները, որոնք պատկանում են վերը նշված խմբերից ցանկացածին:
- Մարդիկ, ովքեր ակնկալվում է, որ կլինեն վերոնշյալ խմբերից որևէ մեկում:

Իրավասությունը հետագայում կարող է տարածվել նաև այլ խմբերի վրա. ամենավերջին տեղեկությունների համար տե՛ս՝ ph.lacounty.gov/monkeypox/vaccine.htm:

14. Ինչպե՞ս կարող եմ պատվաստվել:

Եթե Դուք պատկանում եք այն խմբերից որևէ մեկին, որն իրավասու է կապիկի ծաղկի պատվաստանյութ ստանալ, գնացեք [Հանրային Առողջության պատվաստման վայր](#) կամ այցելեք Myturn.ca.gov գտնելու որևէ վայր Ձեր մոտակայքում: Երբ գտնում եք այդ վայրը, պատրաստ եղեք՝ հաստատելու, որ Դուք բավարարում եք կապիկի ծաղկի դեմ պատասվատանյութ ստանալու իրավասության չափանիշները:

Այցելեք ph.lacounty.gov/monkeypox/vaccine.htm՝ պարզելու, թե արդյոք Դուք իրավասու եք ստանալ պատվաստանյութը:

Տես Կապիկի ծաղկի դեմ պատվաստանյութերի ՀՏՆ-ները՝ JYNNEOS պատվաստանյութի մասին լրացուցիչ տեղեկությունների համար:





15. Ի՞նչ պետք է անեմ, եթե շփվել եմ կապիկի ծաղկի վարակի հետ:

Հետևեք Ձեր առողջությանը: Մարդիկ, որոնց մոտ առաջանում է կապիկի ծաղիկ, սովորաբար ախտանիշներ են ունենում վարակի հետ շփումից 7-14 օր (և մինչև 21 օր) հետո: Դուք կարող եք շարունակել Ձեր ամենօրյա սովորական գործողությունները, եթե ախտանիշներ չեք ունենում: Պատրաստ եղեք մեկուսանալ մյուսներից, եթե Ձեզ մոտ առաջանան կապիկի ծաղկի ախտանիշներ:

Պատվաստվեք, եթե դեռ ամբողջությամբ չեք ստացել երկու դեղաչափից կազմված կապիկի ծաղկի պատվաստանյութի շարքը: Վարակի հետ շփմանը հաջորդող 4 օրերի ընթացքում պատվաստվելը կարող է օգնել կանխել Ձեր վարակվելը: Վարակի հետ շփումից հետո 4-14 օրվա ընթացքում պատվաստվելը կարող է Ձեր հիվանդությունը դարձնել պակաս ծանր: Իմացեք ավելին այստեղ՝ ph.lacounty.gov/monkeypox/vaccine.htm:

Խնդրում ենք պատասխանել Հանրային Առողջության գանգերին: Եթե Ձեր անունը նշվել է որպես կապիկի ծաղկով վարակվածի հետ շփում ունեցածի, հնարավոր է, որ Հանրային Առողջության Վարչությունը կապ հաստատի Ձեզ հետ՝ իմանալու, թե ինչպես եք Ձեզ զգում, և առաջարկելու պատվաստվել, եթե համապատասխանում եք:

Հետևեք [Կապիկի ծաղկով հիվանդ մարդկանց համար մեկուսացման ուղեցույցին](#)՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

16. Ի՞նչ կարող եմ անել ՄԻԱՎ ունեցող մարդիկ՝ կապիկի ծաղկից պաշտպանվելու համար:

ՄԻԱՎ (HIV) ունեցող մարդիկ պետք է հետևեն այն նույն հորդորներին, որոնք տրվում են մնացած բոլորին՝ կապիկի ծաղկից պաշտպանվելու համար: Սակայն կան լրացուցիչ քայլեր, որոնք ՄԻԱՎ ունեցող մարդիկ պետք է ձեռնարկեն: Պատճառն այն է, որ ավելի ու ավելի շատ փաստեր ցույց են տալիս, որ կապիկի ծաղկից կարող է ավելի ծանր լինել այն մարդկանց մոտ, որոնք ունեն ՄԻԱՎ կամ T-լիմֆոցիտների (CD4) ցածր քանակ (<350 բջիջ/մլ) կամ չնվազեցված վիրուսային բեռ (unsuppressed viral load):

Ի՞նչ կարող եք անել Ձեզ պաշտպանելու համար:

- Պատվաստվեք կապիկի ծաղկի դեմ: Պատվաստանյութն ապահով է և կարող է ներարկվել կամ մաշկի շերտերի միջև (ներմաշկային), կամ մաշկի տակ (ենթամաշկային):
- Խուսափեք կապիկի ծաղկիով հիվանդ մարկանց ցանի կամ արտազատուկների հետ անմիջական շփումից: Տե՛ս *Ինչպե՞ս կարող եմ ես ինձ համար նվազեցնել կապիկի ծաղկով վարակվելու վտանգը*:
- Համոզվեք, որ կառավարում եք Ձեր ՄԻԱՎ-ը: Կարևոր է, որ Դուք կանոնավոր կերպով անցնեք Ձեր հակառետրովիրուսային թերապիան (ART), ինչպես որ ցուցված է: Եթե օգնության կարիք ունեք ՄԻԱՎ-ի բժիշկ գտնելու կամ ժամադրություն նշանակելու հարցում, Հանրային Առողջության աշխատակիցները հասանելի են օգնելու համար. այցելեք ph.lacounty.gov/dhsp/RapidART.htm կամ զանգահարեք 1-833-351-2298:





ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Հաճախակի տրվող հարցեր

Ի՞նչ պետք է անել, եթե կարծում եք, որ կապիկի ծաղիկ ունեք:

- Եթե առաջանան ցան կամ թարախոտ վերքեր, որոնք կարծում եք՝ կապիկի ծաղիկ են, անմիջապես դիմեք Ձեր բժշկին:
 - Եթե Ձեր բժիշկը կասկածում է, որ Դուք ունեք կապիկի ծաղիկ, հնարավոր է, որ նա անմիջապես սկսի հակավիրուսային բուժում (TPOXX), եթե ունեք չկառավարվող կամ բարդացած ՄԻԱՎ: Եթե Ձեր ՄԻԱՎ-ը լավ կառավարվում է, բայց Դուք ունեք վերքեր Ձեր աչքերում, բերանում, հետանցքում կամ առանդամի վրա, հնարավոր է, որ նրանք խորհուրդ տան TPOXX՝ նվազեցնելու ցավի, վարակի և սպիների առաջացման հավանականությունը:
 - Եթե Ձեզ նշանակել են TPOXX, շատ կարևոր է, որ ընդունեք այն, ինչպես որ ցուցված է:
- Ավելին իմանալու համար տե՛ս՝ *Ի՞նչ պետք է անել, եթե կարծում եմ, որ վարակվել եմ կապիկի ծաղիկով:*
-

Կապիկի ծաղիկ և ՄԻԱՎ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք HIV.gov՝ [Կապիկի ծաղիկի մասին թարմացումներ](#) կայքէջ:

17. Կարո՞ղ եմ երեխաները վարակվել կապիկի ծաղկով:

Այո: Ցանկացած մարդ կարող է վարակվել կապիկի ծաղկով, եթե ունեցել է սերտ, անձնական կամ մտերմիկ (ինտիմ) շփում որևէ մեկի հետ, որը հիվանդ է կապիկի ծաղկով: Այս բռնկման ընթացքում կապիկի ծաղկով վարակվելու վտանգը երեխաների համար շատ փոքր է: Չնայած երեխաների շրջանում դեպքեր եղել են ԱՄՆ-ում դրանք հազվադեպ են պատահում:

Փոքր երեխաների համար կապիկի ծաղիկով հիվանդանալու վտանգ կա, եթե նրանք ապրում են որևէ մեկի հետ, որն ունի կապիկի ծաղիկ, հատկապես եթե կա վարակված անձի հետ մաշկը մաշկին շփում: Եթե Դուք ունեք կամ կասկած կա, որ ունեք կապիկի ծաղիկ, քայլեր ձեռնարկեք՝ պաշտպանելու Ձեր տան բոլոր անդամներին: Տե՛ս՝ [Մեկուսացման հրահանգներ կապիկի ծաղկով հիվանդների համար:](#)

Դեռահասները, որոնք մտերմիկ/սեռական հարաբերություններ են ունենում այլ մարդկանց հետ, նույնպես կարող են լինել կապիկի ծաղիկով հիվանդանալու ավելի մեծ վտանգի տակ: Սա հատկապես իրատեսական է, եթե նրանք պատկանում են արական սեռին և սեռական հարաբերություն են ունենում արական սեռի այլ ներկայացուցչի հետ: Ավելին իմանալու համար տե՛ս CDC-ի կայքէջը՝ [Ավելի ապահով սեքսը, հասարակական հավաքություններն ու կապիկի ծաղիկը:](#)

18. Մաքրման ի՞նչ միջոցներ են արդյունավետ կապիկի ծաղկի դեմ:

ԱՄՆ Շրջակա Միջավայրի Պահպանության Գործակալությունն (EPA) ունի ցուցակ, որում նշված են այն ախտահանող միջոցները, որոնք գրանցված են կապիկի ծաղկի դեմ օգտագործման համար: Ցուցակը ներառում է հայտնի արտադրանքներ, որոնք բազմաթիվ ձեռնարկություններ ու առանձին անհատներ արդեն օգտագործում են: Այն կարելի է գտնել [EPA-ի կայքէջում:](#) Կայքն ունի որոնման պատուհան, որտեղ կարող եք փնտրել ախտահանիչները՝ օգտագործելով տարբեր բնորոշիչներ, ինչպես օրինակ՝ անունը, շփման ժամանակը և մակերեսի տեսակը:





ԿԱՊԻԿԻ ԾԱՂԻԿ

Հաճախակի տրվող հարցեր

- Ստուգեք, որ արտադրանքը գրանցված լինի EPA-ում:
- Կարդացեք արտադրողի ցուցումները: Համոզվեք, որ արտադրանքը համապատասխանում է Ձեր մակերեսին:
- Մաքրեք մակերեսը օճառով և ջրով, եթե ցուցումներում նշված է դրանք օգտագործելուց առաջ նախնապես մաքրելը կամ եթե մակերեսը տեսանելիորեն կեղտոտ է: Կեղտը կարող է թույլ չտալ ախտահանիչին գործել:
- Հետևեք շփման ժամանակի ցուցումներին: Մակերեսը պետք է խոնավ մնա այնքան ժամանակ, որքան որ նշված է, որպեսզի արդյունավետ լինի: Անհրաժեշտության դեպքում նորից թրջեք:

Լվացքի սովորական միջոցները կարող են օգտագործվել լվանալու համար այն հագուստն ու սպիտակեղենը (օր.՝ անկողնային պարագաներ և սրբիչներ), որոնք օգտանգործվել են կապիկի ծաղկով հիվանդի կողմից:

Պիկոկային և սպասքը կարելի է լվանալ աման լվացող մեքենայում տաք ջրով ու սպասք լվանալու միջոցներով, կամ ձեռքով՝ օգտանգործելով տաք ջուր և սպասքի օճառ:

Տե՛ս CDC-ի [Ձեր տան, աշխատավայրի և հանրային այլ վայրերի մաքրումն ու ախտահանումը՝ կապիկի ծաղկով հիվանդ լինելու ժամանակ և դրանից հետո մաքրության վերաբերյալ հավելյալ տեղեկությունների համար](#):

19. Որտե՞ղ կարող եմ գտնել լրացուցիչ տեղեկություններ:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն

- ph.lacounty.gov/monkeypox
- ph.lacounty.gov/monkeypox/vaccine.htm

Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններ (CDC)

- cdc.gov/poxvirus/monkeypox/index.html

Կալիֆորնիայի Հանրային Առողջության Վարչություն

- cdph.ca.gov/Programs/CID/DCDC/Pages/Monkeypox.aspx

